

ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԵՎ ԲՈՐՍԱՅԻՆ ՁԵՎԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Ճշմարիտ է ներկայանում այն տեսակետը, թե այսօր գոյություն չունի և ոչ մի տեսական կամ էմպիրիկ հետազոտություն, որտեղ հեղինակները կարողանային տնտեսական ցիկլերի կարևոր հիմնախնդիրների վերաբերյալ հանգեին միանշանակ դատողությունների: Այսինքն՝ տնտեսական բոլոր ճգնաժամերի համար չի կարելի գծել նույն նկարագիրը: Դրանք տարբեր բնույթի տնտեսական գործընթացներ են՝ ինչպես տնտեսական կյանքի տարբեր ոլորտներում ծագող պատճառների, այնպես էլ դրանց ընդգրկումների և ինտենսիվության առումներով:

Գրականության մեջ կարելի է հանդիպել ճգնաժամերի դասակարգման շատ տարբեր մոտեցումների՝ մի դեպքում հարցին մոտենալով ճգնաժամի պրոբլեմատիկայի տեսանկյունից, մյուս դեպքում՝ դրսևորման ծավալների, մեկ այլ դեպքում՝ սոցիալ-տնտեսական համակարգում առկա հարաբերությունների կառուցվածքի կամ ծագման անմիջական պատճառների, մի չորրորդ դեպքում էլ՝ դրսևորման բնույթի, ժամանակի և մի շարք այլ գործոնների տեսանկյունից: Տնտեսագիտական միտքը ամեն անգամ անդրադարձել է այս կամ այն ճգնաժամի առանձնահատկություններին, որոնցում ուրվագծվում են ոչ միայն դրանց պատճառները, այլև իրենց ամբողջության մեջ տրվում դրանց դասակարգումները: Այս առումով հետաքրքրություն է ներկայացնում ճգնաժամերի տեսաբան Մենտոր Բունիաթյանի առաջադրած մորֆոլոգիան, ինչը, ըստ էության, ճգնաժամերի՝ դրսևորման ձևերի և առանձնահատկությունների դասակարգման առաջին փորձն էր: Ինչպես վկայում է հեղինակը. «Չնայած ճգնաժամերի տարբեր տեսակները մեծամասամբ մեկ ընդհանուր գործընթացի մասնակի դրսևորումներն են, միննույն ֆենոմենի տարբեր կողմերը, բայց դրանց ծագման ձևերը և հետագա զարգացումներն այնքան տարբեր են մեկը մյուսից, որ ինքնին կարիք ունեն դիտարկման առանձին - առանձին, ինչը թույլ կտա տեսնելու տնտեսական կյանքի պարբերական խախտումների ընդհանուր գծերը և հիմնական պատճառները»¹:

Բունիաթյանի մորֆոլոգիան իր ընդգրկումների մեջ շատ ավելի լայն է: Մույն հոդվածում դիտարկվում են առևտրական և բորսային ճգնաժամերը:

«Առևտրական ճգնաժամ» հասկացությունը առաջին անգամ շրջանառության մեջ է դրել Սիմոնդ դը Սիսմոնդին 1819 թ.-ին: Մինչ այդ խոսվում էր «առևտրական աղետների» մասին:

Առևտրական ճգնաժամի ժամանակ ապրանքները այնքան են արժեզրկվում, որ առևտրականների մեծ մասը սնանկանում են կամ ընկնում են շատ բարդ կացության մեջ՝ կապված վճարային պարտականությունների կատարման հետ: Վճարային պարտականությունների լիկվիդացման հետևանքով առաջացած տնտեսական գործունեության խաթարումը կարող է պայմանավորված լինել տարբեր պատճառներով:

Ապրանքային ճգնաժամի մասին խոսելիս՝ Բունիաթյանը դրանք տարանջատում է ըստ ապրանքների արժեզրկման ազդեցության ոլորտների, առանձնացնելով ապրանքների որոշակի խմբի կամ մասնակի և ապրանքների մեծ մասն ընդգրկող ճգնաժամերը: Մի շարք ապրանքների գների անկման պատճառը նա փնտրում է տնտեսական կյանքի այն գործընթացներում, որոնք կարող են փոփոխություններ առաջացնել առաջարկի և պահանջարկի պայմաններում: Որպես վերջիններիս փոփոխության նախապայմաններ կարող են լինել առատ բերքատվությունը կամ անբերրիությունը, բնական աղետները, ռազմական արշավները կամ ժողովրդական խլրտումները, որոնց հետևում է գնողունակության անկումը, ինչպես նաև առանձին ապրանքների՝ պահանջարկի և պաշարներին անհամապատասխան գների բարձրացումը, ինչը մի կողմից խրա-

¹ M.Bouniatian, Les crises économiques, Paris, 1922, p.51.

խուսելով արտադրությունը, իսկ մյուս կողմից կրճատելով սպառումը, ավելի է սրում պահանջարկի պայմանների և գների անհամապատասխանությունը:

Պահանջարկի և առաջարկի խզվածության հարցում առաջնությունը հատկացնելով առաջարկին, Մ.Բունիաթյանը միաժամանակ ավելացնում է, թե արդի ազգային տնտեսության բարդ կազմակերպությունը անհնար է դարձնում նախապես ստույգ պարզել առաջարկի պայմանները և դրանք համապատասխանության բերել պահանջարկի հետ: Այստեղից էլ դրանց միջև շեղումների և հավասարակշռվածության խախտվելու հավանականությունը: «Առևտրական ճգնաժամերի իրական պատճառը, - գրում է Բունիաթյանը, - ընկած է առաջարկի և պահանջարկի պայմանների հենց այդ նախնական խզվածության մեջ»¹, այսինքն ապրանքների քանակի ու գների, և սպառողների գնողունակության ու ցանկությունների անհամապատասխանության մեջ:

Մ.Բունիաթյանը առևտրական ճգնաժամերը հատկապես կապում է մեծածախ առևտրի հետ: Ի տարբերություն մանրածախ առևտրի, որտեղ գների տատնումները էական չեն, իսկ ապրանքային պաշարները հարմարեցվում են գնորդների ընթացիկ պահանջներին, մեծածախ առևտրում՝ կապված կոնյունկտուրայի փոփոխության հետ, առկա են գների մշտական տատնումներ և ապրանքների հսկայական պաշարներ, ինչը նպաստում է սպեկուլյատիվ գործունեությանը՝ ձեռք բերելով մեծ ազդեցություն թե՛ գների, և թե՛ առևտրական գործունեության վրա ընդհանրապես՝ խորացնելով անհամապատասխանությունը գների և իրական պայմանների միջև և կործանարար հետևանքներ թողնելով առևտրի վրա:

Ընդհանրապես սպեկուլյատիվ գործունեությանը նպաստող նախադրյալները բազմաթիվ են²: Չանդրադառնալով դրանցից յուրաքանչյուրին, Բունիաթյանը ուշադրությունը սևեռում է վերելքի և դրան նախորդող դեպրեսիայի փուլի վրա, երբ մարդիկ, հայտնվելով անելանելի վիճակում, ձեռնարկում են ցանկացած շահավետ թվացող գործարք, դյուրահավատորեն տրվելով ապագայում սպասվող «փայլուն կոնյունկտուրայի» ակնկալիքին: Տնտեսական ակտիվության այս փուլում նոր շուկայի ստեղծումը շատ հաճախ «գերվաճառքի» առիթ է տալիս: Գերազանցատվում է ոչ միայն սպառողների գնողունակությունը, այլև անտեսվում է ընդհանուր առաջարկը, տեղական ճաշակն ու ապրանքների պիտանիությունը: Այսպիսի անջրջահայացությունը դառնում է շուկայի գերլցման պատճառ՝ գներն իջեցնելով անչափ ցածր մակարդակի³: Բունիաթյանը այս առնչությամբ բերում է մի հետաքրքրական օրինակ. թե ինչպես շուկայից օգտվելու շտապողականությունը հանգեցրել էր նրան, որ բրազիլական շուկայի բացման ժամանակ (1808թ.-ին) մի սպեկուլյանտ հաջողացրել է այդ արևադարձային երկիր ուղարկել մեծ քանակով չմուշկներ:

Նշելով տնտեսական գործունեության շարժման ցիկլային բնույթը, մասնավորապես դեպրեսիայից վերելքի փուլին անցման շրջանը, Բունիաթյանը ընդգծում է սպեկուլյացիոն մթնոլորտի տարածման հնարավորությունը տնտեսական կյանքի բոլոր ոլորտներում, բայց և այնպես որպես սպեկուլյացիայի համար «բարենպաստ հող» դիտում է առևտրի ոլորտը: Սովորաբար այստեղ արդյունաբերության աշխուժացման հետ մեկտեղ չափազանց բարձրանում են գները: Ընդ որում, խոսքը վերաբերում է ոչ միայն այն ապրանքներին, որոնց վրա սկզբնապես ուղղված է եղել բարձրացումը: Ապրանքային գների փոխկապակցվածության և սպեկուլյանտների ջանքերի շնորհիվ, այն տարածվում է գրեթե բոլոր ապրանքների վրա: Սովորաբար նման իրավիճակում՝ կապված արտադրության ընդլայնման ձգտման հետ, վարկային լարվածությունից խուսափելը դառնում է գրեթե անհնար: Առաջարկը սկսում է գերազանցել պահանջարկին: Ապրանքային պաշարները գնալով մեծանում են: Նոր գործարքներից սկսում են խուսափել: Վարկը ի վիճակի չի լինում երկար ժամանակ դիմադրելու գների անկմանը: Ազատ կապիտալները սպառվում են: Փոխափոխական դրույքը բարձրանում է: Աշխուժացման կարճ ժամանակաշրջանից հետո ազգային տնտեսության բոլոր ոլորտներում ի հայտ են գալիս խանգարումներ: Գների

¹ M.Bouniatian, Les crises économiques, Essai de morphologie et théorie des crises économiques périodiques, Paris, 1930, p.80.

² Նկատենք, որ սպեկուլյացիային նպաստող Բունիաթյանի նշված պայմաններից Դ.Բեսոմին առանձնացնում է կապիտալի կուտակումը (այդ մասին տե՛ս Daniele Besomi, Mentor Bouniatian on cycles and equilibrium, Structural Change and Economic Dynamics, March 2007, p.20):

* Նման օրինակների մասին (ՄԱՆ-ում և Եվրոպական մայրցամաքում) տե՛ս M.Bouniatian, Handelskrisen in England, 1908, էջ 200-245.

անկումը, կործանելով վստահությունը վճարային պարտականությունների կատարման հանդեպ, առաջ է բերում վարկային ճգնաժամ, էլ ավելի իջեցնելով գները: Վարկային ճգնաժամը, - նկատում է Բունիաթյանը, - տվյալ դեպքում տնտեսական դրության անկայունության արտահայտումն է: Այն ցույց է տալիս «տնտեսական գործունեության նոր և առողջ նորմերի ստեղծման» անհրաժեշտությունը: Այսպիսով, ապրանքային ճգնաժամերի ժամանակ գների անկումը եթե մի կողմից պայմանավորված է ապրանքային չափազանց մեծ պաշարներով և սպեկուլյացիայի հետևանքով ուռճացված գներով, ապա մյուս կողմից՝ արդյունք է վարկային և դրամական ճգնաժամերի: Բերելով տարբեր երկրների և տարբեր ժամանակների ճգնաժամերի ժամանակ տնտեսական ցուցանիշների վիճակագրական տվյալներ, Բունիաթյանը նկատում է, որ սնանկացումների թիվը՝ սովորականի համեմատ ավելանում է 2-ից 3 անգամ, իսկ առևտրի կարևորագույն առարկաների գները ճգնաժամերի ժամանակ սովորաբար իջնում են 30 – 40% և ավելի¹ :

Որպես գների չափազանց իջեցման հետևանքները (ունեցվածքի բաշխման մեջ մեծ փոփոխությունների և ձեռներեցության նվազման հետևանքով ստեղծված տնտեսական կյանքի անառողջ պայմանները) մեղմելու և ճգնաժամի սրմանը խոչընդոտելու միջոց, Բունիաթյանը առաջարկում է կենտրոնական բանկերի կամ կառավարության կողմից ապրանքների կամ այլ վստահելի միջոցների դիմաց փոխատվությունների տրամադրումը, ինչպես նաև հեղինակավոր ֆիրմաների ինտենսիվ վարկավորումը: Մ.Բունիաթյանը չանտեսելով այն հանգամանքը, որ նման օգնությունը կարող է թուլացնել առևտրականի մոտ պատասխանատվության զգացումը ու խրախուսել սպեկուլյացիան, ինչպես նաև չհամաձայնելով այն մտքի հետ, թե ձեռնարկատերերն իրենք են իրենց կորուստների և դժվարությունների միակ մեղավորները, նկատում է թե, կապված այն փաստի հետ, որ յուրաքանչյուր առանձին տնտեսություն սերտորեն կապված է կոնյունկտուրայի հետ, անհատական սխալները անդրադառնում են ամբողջ հասարակության վրա, և ճգնաժամերից տուժում են ոչ միայն սպեկուլյանտները, այլև ամենագույշ պահպանողական ձեռնարկատերերը: Այդ պատճառով, նա ընդհանրացնում է, թե անցյալ կորուստների դառը փորձի վրա հույսեր դնելն անիմաստ է, և մեկ ճգնաժամի «դասերը» ետ չեն պահում հաջորդի գրեթե կանոնավոր վերադարձից²:

Չնայած որ առևտրական ճգնաժամը, լինելով ընդհանուր տնտեսական ճգնաժամի մասնակի դրսևորում, վերջինիս բնորոշ ֆենոմենն է և բավականին նպաստում է դրա սրությանն, այնուհանդերձ, կապված տեղեկատվական միջոցների հսկայական հեղաշրջման, ապրանքների տեղափոխման արագացման ու էժանացման հետ՝ այն պահպանել է իր նշանակությունը միայն թույլ զարգացած երկրներում: Առաջավոր երկրներում գների փոփոխությունը չվերաճելով ճգնաժամի, մնում է լոկ որպես «տնտեսական կյանքի ինտենսիվության պարբերական տատանումների ցուցանիշ»: Նման երկրներում հաղորդակցության միջոցների հեղաշրջումը, ապրանքների տեղափոխման արագացումն ու էժանացումը շուկան դարձնում են առավել տեսանելի, շնորհիվ որի գների տեղական տարբերությունները հավասարվում են համաշխարհային շուկայի գներին համապատասխան, կրճատվում են գների տատանումների չափերը, իսկ տեղերում ապրանքների պաշարները հեշտությամբ համապատասխանության են բերվում պահանջմունքների հետ:

Ակներև է, ապրանքային ճգնաժամերը Մ.Բունիաթյանին ներկայանում են որպես գների ճգնաժամեր, որոնց անմիջական ազդեցությունը տնտեսության վրա ամենից առաջ արտահայտվում է ունեցվածքի և եկամուտների վերաբաշխման մեջ, ի վերջո իրենց բացասական ազդեցությունը թողնելով արտադրության վրա:

Հաշվի առնելով ճգնաժամի վտանգի մշտական առկայությունը, կարևոր է իմանալ ճգնաժամային իրավիճակների առաջացման նախանշանները, ինչպես նաև գնահատել վերջիններիս հաղթահարման հնարավորությունները: Այս առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում բորսային և սպեկուլյատիվ ճգնաժամերը:

Բորսային ճգնաժամերը՝ ֆիկտիվ կապիտալի չափազանց ուռճացմանն ուղղված արժեթղթերի շուկայի յուրօրինակ պատասխանն է:

¹ Այդ մասին տե՛ս M.Bouniatian, *Geschichte der Handelskrisen in England*”, München, 1908, p.308-312.

² M.Bouniatian, *Les crises économiques*, Paris, 1922, p.84.

Ֆոնդային բորսաների շնորհիվ, արժեթղթերը ձեռք են բերում յուրահատուկ շարժունակություն՝ որպես մասնավոր տնտեսական կապիտալի շրջանառության դյուրին միջոցի: Բաժնետոմսերի և փոխառությունների կուրսերի տատանումները՝ կապված բաժնետիրական ընկերությունների եկամտաբերության փոփոխությունների հետ, հանգեցնում են հասարակության գնողունակության ծավալների և բաշխման փոփոխությունների, հաճախ պատճառ դառնալով արտադրության ընթացքի և տնտեսական բարիքների շրջանառության խանգարումների: Բաժնետոմսերի և փոխառությունների կուրսերի անկումը կապիտալի կորուստ են ենթադրում ոչ միայն արժեթղթերի տերերի, այլև ամբողջ հասարակության համար, թեև «դա դեռ չի նշանակում տնտեսական ճգնաժամ այդ բառի տեխնիկական իմաստով»: Հանրային կապիտալի զգալի մասի կորուստը կամ հարստության և եկամուտների բաշխման տեղաշարժերը՝ որպես ֆինանսական և սոցիալական աղետներ, իրենց հետևանքների մեջ ավելի շատ բնորոշ են հանկարծահաս փոփոխություններին:

Տնտեսական կյանքի խափանումներն ամենից առաջ երևան են գալիս արժեթղթերի շրջանառության ոլորտում: Բացի բանկիրներից, արժեթղթերի առք ու վաճառքով զբաղվող պրոֆեսիոնալ անհատներից, վարկային հաստատություններից, արժեթղթերի կուրսերի տատանումներից շահելու ակնկալիքը այս գործընթացի մեջ է ներգրավում նաև բազմաթիվ պատահական սպեկուլյանտների: Եվ քանի որ շատերը արժեթղթերի են վերածում ոչ միայն իրենց ունեցվածքի զգալի մասը, այլև պարտք վերցրած կապիտալը, որը հաճախ մի քանի անգամ գերազանցում է իրենց սեփական միջոցներին, կուրսերի նույնիսկ փոքր տատանումները՝ մեծապես փոփոխելով շահագրգիռ անձանց գույքային վիճակը, այս ոլորտում կարող են առաջ բերել ազգային տնտեսության սուր խանգարումներ, որոնց էլ հենց Բունիաթյանը անվանում է բորսային ճգնաժամեր¹: Ըստ որում, նա մեծ տեղ է հատկացնում ոչ թե այն ճգնաժամերին, որոնց պատճառը բորսայից դուրս է՝ կապված օրինակ՝ պետության կողմից վճարումների դադարեցման կամ բաժնետիրական կապիտալի վրա հիմնված արդյունաբերական հիմնարկների փլուզման հետ, այլ այն ճգնաժամերին, որոնք ծագում են արժեթղթերի շրջանառության հենց բուն գործընթացից: Խոսքը վերաբերում է սպեկուլյատիվ ճգնաժամերին, որոնց ժամանակ սպեկուլյատիվ չարաշահումները հանգեցնում են արժեթղթերի կուրսերի կտրուկ անկման, իսկ ինչ վերաբերում է ներդրված կապիտալի իրական արժեքի հնարավոր կրճատմանը, Բունիաթյանը վերջինիս տալիս է երկրորդային նշանակություն: Սպեկուլյացիան դիտելով որպես գնագոյացման գործոն, Բունիաթյանը նկատում է, որ եթե մի կողմից, այն ընդլայնում և աշխուժացնում է բորսային գործունեությունը, նվազեցնում է կուրսերի տատանման մեծությունը, ապա մյուս կողմից, կասկածելի արժեքներին տալիս է թվացող կայունություն՝ դրանց կուրսերը պահպանելով բավականին մեծ բարձրության վրա: Ակներև է, որ սպեկուլյացիոն ճգնաժամերի ուսումնասիրման հարցում ուշադրություն է սևեռվում բորսային սպեկուլյացիայի վնասակար դրսևորումների վրա՝ որպես սպեկուլյատիվ ճգնաժամերի հիմքի:

Անդրադառնալով սպեկուլյատիվ ճգնաժամերի ժամանակ ի հայտ եկող իրարանցմանը, Բունիաթյանը նկատում է, որ վերջինիս հետագա աշխուժացման զարգացման համար գոյություն ունի հատկապես բարենպաստ տնտեսական կյանքի որոշակի ժամանակաշրջան: Խոսքը վերաբերում է տնտեսական ցիկլի դեպրեսիայի փուլին հետևող աշխուժացմանը: «Սպեկուլյատիվ տենդի» աշխուժացման հարցում հեղինակը առանձնացնում է դրան նպաստող երկու պայմաններ. առաջինը՝ կուրսերի հաճախակի և կտրուկ տատանումներն են, երկրորդը՝ մեծ քանակության ազատ կապիտալի առկայությունը, որի մի մասը տեղ է գտնում արդյունաբերությունում և առևտրում, իսկ մյուսը, կուտակվելով բանկերում, բավականին ցածր գներով առաջարկվում է ձեռնարկատերերին:

Քանի որ սպեկուլյատիվ ժամանակաշրջաններին սովորաբար նախորդում են բավականին ցածր փոխառվական դրույքները (ինչը Մ.Բունիաթյանը հիմնավորում է մի շարք փաստական տվյալներով)², նման իրավիճակում արժեթղթերի աճող պահանջարկը բարձրացնում է դրանց

¹ M.Bouniatian, Les crises économiques, Essai de morphologie et théorie des crises économiques périodiques, Paris, 1930, p.94.

² Ст'у М.А.Бунятян, Экономические кризисы, М., 1915, с. 51.

կուրսը, վերջինս դարձնելով սպեկուլյացիայի հարմար առարկա: Աճող իրարանցումը պետությանը և համայնքներին նոր փոխառությունների թողարկման առիթ է տալիս, ինչը սակայն պետությանը դրդում է օգտվելու կասկածելի վարկերից և պատճառ դառնում մի շարք սնանկացումների: Բունիաթյանը նկատում է, որ միջին և հարավ-ամերիկյան, ինչպես նաև հարավային և արևմտյան եվրոպական պետությունների սնանկացումների երկար շարքի ելակետը հենց սպեկուլյատիվ տենդով տարված եվրոպական բորսաների կողմից թողարկված փոխառություններն են:

Ի տարբերություն պետական փոխառությունների, բաժնետոմսերի թողարկումը կախված չէ արտաքին գործոններից և այն հանգամանքը, որ այս դեպքում թողարկումը ելնում է հասարակության պահանջներից, որը բաժնետոմսերում տեսնում է ազատ կապիտալի շահավետ ներդրման տարբերակ, հանգեցնում է սպեկուլյացիայի առավել մեծ չափերի: Բաժնետոմսերի կուրսը բարձրանում է 10-30 անգամ, սկզբնական կապիտալի արժեքը գերազանցելով նույնիսկ մինչև 60-90 անգամ: Ընդ որում, բաժնետոմսերի շուկայական արժեքը ձևավորվում է՝ ելնելով ոչ այնքան բաժնետոմսերի իրական, որքան սպեկուլյատիվ արժեքից, քանի որ վերջիններս կարող են այլ սպեկուլյանտների կողմից իրացվել առավել բարձր կուրսով: Որպես մատչելի և հեշտ վաստակի միջոց, սպեկուլյացիան բորսային իրարանցման մեջ է ներգրավում տնտեսական հարցերում անփորձ նորանոր մարդկանց: Բունիաթյանը զուգահեռներ գծելով ապրանքային և բորսային սպեկուլյացիաների միջև և նշելով երկուսում առկա նման երևույթները, այնուհանդերձ շեշտում է վերջինիս առավել ինտենսիվ բնույթը՝ կապված բորսայում թղթերի վաճառքի կենտրոնացման, բորսայական գործարքների տեխնիկական պարզունակության և հանրամատչելիության, բանկերի աջակցության և մի շարք այլ երևույթների հետ: Ապրանքային սպեկուլյացիան, ի տարբերություն բորսային, հիմնականում ներգրավում է միայն տվյալ ոլորտի անձանց: Սակայն տնտեսական կյանքը ցուցադրում է երկակի դրսևորումներ: Սպեկուլյատիվ ժամանակահատվածները բարենպաստ պահեր են բազմաթիվ նոր բաժնետիրական ձեռնարկությունների հիմնման համար: Սակայն, եթե մի կողմից, ստեղծվում են մեծ բաժնետիրական կապիտալ պահանջող նոր օգտակար հաստատություններ, ապա մյուս կողմից՝ բաժնետիրական տենդը բազմաթիվ անհիմն բաժնետիրական ընկերությունների ստեղծման առիթ է տալիս, որոնց միակ նպատակը բորսային խաղերի միջոցով հարստացումն է¹: Նման ձեռնարկությունները (այսպես կոչված «Bubbles» օձառի պղպջակներ ձեռնարկությունները) հաճախ կասեցնում են մյուս, առավել լուրջ հիմնարկների ստեղծումը, խանգարում նրանց զարգացմանը:

Բաժնետիրական տենդի հետևանքով կուրսային արժեքների հսկայական բարձրացումները, սպեկուլյացիոն ժամանակաշրջանի ամենաբնորոշ երևույթներից են: Անգլիայի տնտեսական պատմությունը հայտնի է այդպիսի ցայտուն օրինակներով, մասնավորապես նշելով 1720, 1824-1825, 1895 թվերի սպեկուլյացիաները, երբ բաժնետոմսերի շուկայական արժեքը մոտ 4-7 անգամ գերազանցում էր անվանական արժեքին²: Նման սպեկուլյացիաները սովորաբար տևում են մի քանի ամիս: Սպեկուլյացիան, գրում է Բունիաթյանը, իր մեջ կրում է սեփական կործանման պատճառները: Բաժնետիրական ընկերությունների կողմից կապիտալային և դրամական շուկաներին ներկայացվող պահանջները բարձրացնում են փոխատվական դրույքը: Փողի թանկացումը խաթարում է բորսային սպեկուլյացիան, լիկվիդացվում են բազմաթիվ վարկային գործարքները: Սպեկուլյացիոն մոլուցքի թուլացումը և արժեթղթերի առաջարկի մեծացումը նպաստում են վերջիններիս կուրսերի անկմանը: Կարծես տեղի է ունենում «համընդհանուր սթափություն»: Լավատեսությունը փոխարինվում է չափազանց մեծ հոռետեսությամբ, նույնիսկ վստահելի արժեքների կուրսերը ընկնում են իրենց եկամտաբերության մակարդակից ցածր: Առևտրական տների վճարունակության հանդեպ անվստահությունը պատճառ է դառնում վարկային ճգնաժամի, որը սահմանափակվում է սպեկուլյանտների և նրանց հովանավորող

¹ M.Bouniatian, Les crises économiques, Paris, 1922, p.95.

² M.Bouniatian, Geschichte der Handelskrisen in England, München, 1908, pp.104, 252.

բանկերի և կապիտալիստների նեղ շրջանով: Այս ամենը հանգեցնում է արժեթղթերի կուրսերի անկանոն տատանումներին և վերջիններիս շրջանառության կազմալուծմանը¹:

Հարկ է նկատել, որ սպեկուլյատիվ ճգնաժամերի ազդեցությունը միանշանակ չէ: Եթե սպեկուլյանտների մի մասը, գլխավորապես բորսայական խաղի մեջ ներքաշված կողմնակի անձինք սնանկանում են, ապա ոմանք էլ, ժամանակին նկատելով վրա հասնող վտանգը, օգուտ են քաղում ստեղծված կոնյունկտուրայից:

Դիտարկելով բորսային ճգնաժամերի ազդեցությունն արտադրության վրա, Բունիաթյանը կարևորում է այն հանգամանքը, որ «չպետք է շփոթել նրանց ուղղակի հետևանքները ֆինանսական ճգնաժամի արդյունքների կամ հասարակական կապիտալի կորստի հետ, քանի որ դրանք բորսային ճգնաժամի առաջնային պատճառներն են»²: Ի տարբերություն ֆինանսական ճգնաժամի, որը բավականին ուժեղ է ազդում արտադրության վրա, բորսային ճգնաժամերը փոփոխություններ առաջացնելով միայն ունեցվածքի բաշխման մեջ և ժամանակավորապես խաթարելով բորսային շրջանառությունը, չեն փոխում հասարակական սպառման առարկաների կազմը և չափը, իսկ հետևաբար նաև նկատելի ազդեցություն չեն թողնում արտադրության վրա: Ըստ էության, նույնը կարելի է ասել սպեկուլյատիվ ճգնաժամերի համար: Եվ հենց այդ իմաստով էլ Բունիաթյանը ընդգծում է այն, որ չնայած սպեկուլյացիոն ոգին տարածվելով առևտրի և արդյունաբերության վրա ու միակողմանի ազդելով ազատ կապիտալի ներդրման վրա, այն ուղղում է դեպի սպեկուլյացիային ձեռնադր արտադրության ճյուղերը և նպաստում արտադրության և սպառման հավասարակշռման խախտմանը, բայց և այնպես կարճատև սպեկուլյատիվ տենդի պայմաններում արտադրության վրա վերջինիս ազդեցությունը սահմանափակ է: Այսպիսով, բորսային ճգնաժամերը քիչ են փոփոխում մինչ սպեկուլյատիվ ժամանակաշրջանը առկա արտադրության պայմանները և միանգամայն որոշակի է, որ ճգնաժամերի բոլոր տեսակներից որպես բաշխման ֆենոմենի առավել մաքուր ձև, Բունիաթյանը առանձնացնում է հենց բորսայինը, որը բոլորից քիչն է անդրադառնում արտադրության վրա:

Որպես տնտեսական ֆենոմենի մասնակի դրսևորում՝ սովորաբար բորսային սպեկուլյացիան տնտեսական կյանքի այլ ոլորտների սպեկուլյացիաների հետ միասին հանդես է գալիս որպես «էքստենսիվ տնտեսական գործունեություն»: Մակայն Բունիաթյանը, դիմելով տնտեսական պատմությանը, բերում է մի շարք օրինակներ, երբ բորսային սպեկուլյացիան հանդես է գալիս ինքնուրույն, որպես տնտեսական կյանքի միակ և գերիշխող անոմալիա³: Լինելով ամենաշարժունը և զգայունը՝ բորսային ճգնաժամերը առաջինն են զգում կոնյունկտուրայի փոփոխությունը և հանդես գալիս արտադրական գործընթացի խափանման թե գուշակը, և թե պատճառներից մեկը:

Հաշվի առնելով բորսային սպեկուլյացիայի տարածման լայն չափերը, Բունիաթյանը վերջինիս սահմանափակման համար առաջարկում է բնակչության լայն շերտերի տնտեսական ուսուցում և բորսայական շրջանառության, բաժնետիրական և հիմնադրական գործի օրենսդրական կարգավորում, ինչպես օրինակ՝ մինչև բաժնետոմսի լրիվ արժեքի վճարումը ժամանակավոր վկայականներով բորսային սպեկուլյացիաների սահմանափակում, բաժնետոմսերի նվազագույն արժեքի բարձրացում, ինչը ոչ միայն կնեղացնի սպեկուլյացիայի շրջանակները, այլև անապահով խավին կպաշտպանի կորուստներից:

Եվ ի վերջո, ամբողջ հասարակության տեսանկյունից վերցրած, բորսային ճգնաժամը դա տնտեսության գործունեության վերադարձն է իրական դրությունն արտացոլող մակարդակին, ինչն էլ դառնում է նախապայման տնտեսության հետագա առողջացման համար: Այս իմաստով, Բունիաթյանի հայեցության մեջ ճգնաժամերի առանձին ձևերը բնութագրվում են որպես հասարակական տնտեսության մեկ ամբողջական օրգանիզմի խափանումների արտահայտություններ:

¹ М.Бунятян, նշվ. աշխ., էջ 55-56.

² M.Bouniatian, Wirtschaftskrisen und Ueberkapitalisation, München, 1908, p.45.

³ M.Bouniatian, Geschichte der Handelskrisen in England, München, 1908, p.86-125.

Տե՛ս նաև՝ М.Вирт, История торговых кризисов в Европе и Америке, 1877, СПб., с. 4-7.

ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԵՎ ԲՈՐՍԱՅԻՆ ՁԵՎԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

ԼԻԱՆԱ ԿԱՐԼԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

Համառոտագիր

Տնտեսական ճգնաժամերի ֆենոմենը վաղուց դարձել է տնտեսագիտական մտքի քննության առարկան: Այս առումով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում դրանց դրսևորման ձևերի սահմանազատման խնդիրը: Հոդվածում դիտարկվում են Մ.Բունիաթյանի ճգնաժամերի մորֆոլոգիայի առևտրային և բորսային ու սպեկուլյացիոն ձևերը՝ որպես հասարակական տնտեսության մեկ ամբողջական օրգանիզմի խափանումների արտահայտություններ, որոնց պատճառների վաղ ճանաչումը թույլ կտա ընդլայնել վերջիններիս, իսկ հետևապես նաև արտադրության ընթացքի և տնտեսական բարիքների շրջանառության խանգարումները ծնող պատկերացումների շրջանակները:

Բանալի բառեր. *կոնյունկտուրա, ճգնաժամ, գնողունակության անկում, տնտեսական ակտիվություն, սպեկուլյացիա, վճարային պարտականություններ, եկամուտների վերաբաշխում, վարկային լարվածություն, արժեթղթերի շուկա, փոխառական դրույք, բորսային գործունեություն:*

ТОРГОВАЯ И БИРЖЕВАЯ ФОРМЫ ПРОЯВЛЕНИЯ КРИЗИСОВ

ЛИАНА КАРЛЕНОВНА АРУТЮНЯН, *к.э.н., доцент*

научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

Феномен экономических кризисов давно уже является предметом изучения экономической мысли. В связи с этим определенный интерес представляет проблема разграничения форм их проявления. В статье рассматриваются как торговая, биржевая, так и спекулятивная формы кризисов, которые с точки зрения М.Буниятына являются выражением органического расстройств хозяйственной системы, раннее распознавание которых позволит расширить рамки представлений о них, а, следовательно, также и причинах, порождающих нарушение процесса производства и обращения хозяйственных благ.

Ключевые слова: *конъюнктура, кризис, спад платежеспособности, экономическая активность, спекуляция, платежные обязательства, распределение доходов, кредитная напряженность, рынок ценных бумаг, ссудный процент, биржевая деятельность.*

FORMS OF MANAGING TRADE AND EXCHANGE CRISES

LIANA KARLEN HARUTYUNYAN, *Candidate of Sciences (Economics), Associate Professor*

Research Associate, M. Kotanyan Institute of Economics

National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

For a long time the phenomenon of economic crises has been a subject of study of the economic thought. In this regard, the distinction between the forms of their manifestations is of a certain interest. The article examines trade, as well as stock and speculative forms of the morphology of M. Bunatian's crises, as expressions of the disorders of a single general economic organization, the knowledge of which will expand the scope of representation that affects both the causes and the process of production and circulation disorders of economic goods in general.

Keywords: *Conjuncture, crisis, the decline in the solvency, economic activity, speculation, payment obligations, distribution of income, credit tension, securities market, lending interest rate, stock exchange activity*